ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/121

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թ. N 121

«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 38

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2/երկու/ տարի ժամկետով, 17 մայիսի 2021 թ. N 48

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 20-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԳՊԳՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 01 փետրվարի 2024թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 03 մայիսի 2024թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 16-18-ը սեպտեմբերի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 03 դեկտեմբերի 2024թ.

թերությունների վերացման նախնական

ծրագրի ներկայացում՝ 07 հունվարի 2025թ.

ԳՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմեն Հարությունյան՝** Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Ելենա Մարտիրոսյան՝** Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն, Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:
- **Նարինե Հովհաննիսյան՝** ՀԱԱՀ-ի Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաներ ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի անդամ:
- **Ինգա Հարությունյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողուհի, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԳՊԳՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. *ԳՊԳՔ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում*

Քոլեջում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերը հիմնականում ապահովում են տարածաշրջանի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստումը: Քոլեջը քայլեր է ձեռնարկում շրջանավարտների գործնական հմտությունների զարգացման ուղղությամբ՝ օգտագործելով գործատուների ռեսուրսները: Դասախոսական կազմը համալրված է որակյալ

մասնագետներով նգործատուներով սակայն նպատակահարմար է ընդլայնել պրակտիկ փորձառություն ունեցող մասնագետների ներգրավումը և զարգացնել երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականությունը՝ նպաստելով մեկ դասախոսի կողմից դասավանդվող մոդուլների թվի նվազեցմանը:

Արտադրական պրակտիկաների իրականացումը պահանջում է առավել համակարգային մոտեցում՝ ապահովելու սահմանված բոլոր պրակտիկ վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերումը բոլոր մասնագիտությունների շրջանակում: Առանձին դրական փորձեր, ինչպես «Անասնաբուժություն» մասնագիտության պետական ամփոփիչ քննությունների կազմակերպումը իրական արտադրական միջավայրում, կարող են դիտարկվել որպես օրինակելի փորձ՝ ինստիտուցիոնալ մակարդակով կիրառման և տարածման համար: Խրախուսելի է նաև բոլոր մասնագիտությունների գծով արտադրական պրակտիկաների ավարտին կազմակերպել եզրափակիչ քննություններ՝ պրակտիկ կարողությունների ձևավորումը գնահատելու համար: Քոլեջն ապահովում է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ հիմնական ենթակառուցվածքները և նյութատեխնիկական ռեսուրսները: Միևնույն ժամանակ, լաբորատորիաների վերազինման, լսարանային ֆոնդի վերանորոգման և կահավորման ուղղությամբ առկա է բարելավման անհրաժեշտություն, որի իրականացումը խորհուրդ է տրվում կազմակերպել անկախ նոր շենքի շահագործման հնարավորությունից:

II. *Հանձնաժողովն արձանագրում է, որ ռազմավարական կառավարման և որակի ապահովման համակարգերը քոլեջում ձևավորման փուլում են, և կառավարման գործընթացում առաջնահերթությունը տրվում է քոլեջի առաքելության և կայուն զարգացման ապահովմանը:*

Քոլեջի ռազմավարական զարգացումն իրականացվում է սահմանված առաքելության և ռազմավարական ծրագրի հիման վրա: Միաժամանակ, հանձնաժողովը կարևորում է տվյալների հավաքագրման և մշտադիտարկման կայուն մեխանիզմների զարգացումը, ինչպես նաև արդյունահենք կառավարման մշակույթի ամրապնդման նպատակով գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-եր) ներդրումը և դրանց մշտադիտարկումը:

Խորհուրդ է տրվում քոլեջին վերանայել իր կազմակերպական կառուցվածքը՝ ապահովելով կառույցի բոլոր միավորների լիարժեք ընդգրկվածությունն ու թափուր պաշտոնների համալրումը: Որակի ապահովման համակարգի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է խթանել որոշումների կայացումը՝ հիմնվելով տվյալների վերլուծության վրա, ինչպես նաև ապահովել ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

III. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:*

Քոլեջը ձեռնարկում է քայլեր ուսանողների ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացման ուղղությամբ: Նպատակահարմար է ուսանողական հետազոտական աշխատանքների ընտրության գործընթացում շեշտադրել մասնագիտական ոլորտներում կիրառելի հմտությունների ձևավորումը՝ հաշվի առնելով գործատուների միջավայրի պահանջները: Կարևոր է ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների մասնակցությունը հետազոտական նախագծերին, ինչպես նաև ապահովել ուսանողական առաջադրանքներում վերլուծական և հետազոտական կարողությունների համակարգված գնահատումը՝ միջազգային փորձին համապատասխանության սկզբունքով: Օտար լեզուների, մասնավորապես անգլերենի ուսուցման ուղղությամբ իրականացվող գործողությունները պետք է ամրապնդվեն պլանավորված նախաձեռնություններով՝ նպաստելով ուսանողների և աշխատակազմի միջազգային շարժունության հնարավորությունների զարգացմանը:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ԳՊԳՔ Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց:
3. Թերությունների վերացման ծրագրում նախատեսել I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողություններ՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
4. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտը մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
5. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԳՊԳՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., մարտի 20